
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐՈՒՄ (տեսական և կիրառական քննություն)

ԷԴԻՏԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Վերաբերմունքի իմաստի դրսևորման տեսակետից խոսքի մասերը զգալիորեն տարբերվում են միմյանցից և օրինաչափորեն առանձին խմբեր են կազմում:

Այս կապակցությամբ արդյունավետ կլինի անդրադառնալ Ս. Աբրահամյանի՝ խոսքի մասերի դասակարգմանը, քանի որ նրա առանձնացրած խմբերն ուղղակիորեն կապվում են մեզ հետաքրքրող հարցի հետ: Ս. Աբրահամյանը տասը խոսքի մասերը ներառում է երեք խմբի մեջ՝ նյութական իմաստ ունեցող, հարաբերության (քերականական) իմաստ ունեցող և վերաբերմունքային իմաստ ունեցող բառերի¹: Բոլոր խոսքի մասերն ընդգրկող այս բաժանումը, թեև հիմնված է բառերի հիմնական իմաստների (նշանակյալների) վրա, կարող է օգտագործվել նաև վերաբերմունքի արտահայտման հնարավորությունները որոշելու ժամանակ, քանի որ տարբերակված խմբերը տարբերվում են նաև այդ առումով:

Վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերում (վերաբերական, ձայնարկություն) վերաբերմունքի իմաստը բառի ուղղակի իմաստն է, ընդ որում դա վերաբերմունք հասկացության անվանումը չէ, այլ վերաբերմունքի անմիջական դրսևորումը: Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերում (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ) վերաբերմունքային իմաստները կարող են դրսևորվել որպես առարկա, հատկանիշ, գործողություն, օրինակ՝ *ապել, ապելի, ապելություն*: Դրանից բացի, այդ բառերում հնարավոր է լրացուցիչ վերաբերմունքային իմաստի արտահայտումը: Այսինքն՝

¹ Տե՛ս Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 30:

Տե՛ս S. G. Abrahamyan, N. A. Parnasyan, H. A. Ohanyan, Djamanakacic hayots lezu, հ. 2, Եր., 1974, էջ 30.

այս խոսքի մասերում վերաբերմունքը կարող է արտահայտվել և՛ որպես բուն բաղիմաստ, և՛ որպես հարանշանակություն:

Հարաբերության իմաստ ունեցող խոսքի մասերը (կապ, շաղկապ) յուրահատուկ են նրանով, որ, որպես կանոն, չեն կարող կապվել վերաբերմունք արտահայտելու հետ: Դրա պատճառն այն է, որ այս բառերը լեզվից դուրս եղած երևույթներ չեն նշանակում, այլ լեզվական միավորների՝ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների հարաբերություններ: Իսկ բառերի կամ նախադասությունների կապերն այն երևույթները չեն, որոնց նկատմամբ խոսողը կարող է հատուկ վերաբերմունք ունենալ: Միայն բացառիկ դեպքեր կան, երբ հոմանիշ կապակցական միջոցների միջև ընտրությամբ ինչ-որ վերաբերմունք է արտահայտվում, օրինակ՝ *պարծառով – շնորհիվ*, կամ էլ ոճական տարբերություններ են հանդես գալիս, օրինակ՝ *սակայն – բայց, և – ու*:

Այստեղ հարկ է հիշատակել 2. Մորրիսի տված դասակարգումը, որով տարբերակվում են սեմանտիկան, սինտակտիկան և պրագմատիկան: Պրագմատիկան՝ գործաբանությունը, որ նշանների և մարդկանց հարաբերություններն են, բոլոր նշաններին է հատուկ: Բայց վերևում ասվածից պարզ է դառնում, որ խոսքի մասերի տարբեր խմբերում այն տարբեր ձևերով և չափերով է հանդես գալիս: Դրա հիման վրա կարելի է քննադատել այդ խմբերը: Նյութական իմաստ ունեցող խոսքի մասերում իմաստը (ըստ 2. Մորրիսի՝ սեմանտիկան) կարող է գործաբանական լինել: Մյուս կողմից բոլոր իմաստները կարող են լրացվել գործաբանական հարանշանակություններով: Վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերում գործաբանական իմաստը բառի հիմնական իմաստն է:

Միտքն ու զգացմունքը երկու զուգադրվող ոլորտներ են, որոնք պարտադիր ներգրավվում են մարդու և իրականության փոխհարաբերությունների մեջ: Դրանք կարող են նույն վերաբերմունքը ձևավորել կամ տարբեր արդյունքների հանգեցնել: Այդ տարբերությունը լեզվում հանգեցրել է երկու տեսակի բառերի՝ վերաբերականների և ձայնարկությունների առաջացման: Այդ բաժանումը հնարավորություն է տալիս արտահայտելու մտքով որոշվող դատողական վերաբերմունք և զգացմունքներով որոշվող հուզական վերաբերմունք:

1. *Վերաբերականներ*

Վերաբերականները կամ եղանակավորող բառերը ծառայում են խոսողի մտածական, դատողական վերաբերմունքի արտահայտմանը: Ինչպես այլ խոսքի մասերի մեջ, այնպես էլ վերաբերականների մեջ կան բառեր, որոնց խոսքիմասային պատկանելությունը միարժեք չէ, և երբեմն դժվար է լինում

դրանք սահմանազատել այլ խոսքի մասերից: Որոշ վերաբերականներ ընդհանրություն ունեն մակբայների հետ: Երբեմն ծագում է անգամ տվյալ բառը վերաբերական կամ շաղկապ համարելու հարցը: Դրան գումարվում է և այն, որ տարբեր լեզուների քերականություններում ընդունված բաժանումներ կան, որոնք հաճախ իրարից տարբեր են լինում, այդ պատճառով միևնույն իմաստն ունեցող բառը տարբեր լեզուներում տարբեր խոսքի մասերի մեջ է դրվում: Բայց մեր խնդիրն այստեղ խոսքի մասերի սահմանները ճշտելը չէ; այլ դրանցով որոշ իմաստներ արտահայտելու հնարավորությունը պարզելը: Այդ պատճառով անցնում ենք վերաբերականների դիտարկմանը: Հայերենի քերականության մեջ վերաբերականները հանգամանալից ներկայացրել են Ս. Աբրահամյանը² և Մ. Ասատրյանը³: Ս. Աբրահամյանը թվարկում է 46 եղանակավորող բառ և այդ արժեքն ունեցող մոտ երկու տասնյակ բառակապակցություն և դրանք բաժանում է ինը տեսակի, իսկ Մ. Ասատրյանը տեսակներ չի նշում, այլ առանձին-առանձին բնութագրում է իր հիշատակած 67 եղանակավորող բառերը:

Վերաբերականների մեջ Ս. Աբրահամյանի առանձնացրած տեսակներն են՝ հաստատական, ցուցական, երկբայական, սաստկական, սահմանափակման, կամային, զիջական, ժխտական, բաղձանքի: Այս թվարկումը փաստորեն վերաբերականներով արտահայտվող վերաբերմունքների թվարկում է; Հեշտ է տեսնել, որ այդ վերաբերմունքների մեջ բացասական երանգ ունեցողները փոքր թիվ են կազմում. վերաբերականների տեսակների մեծ մասը դրական կամ չեզոք վերաբերմունք է արտահայտում: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ ինքնին չեզոք վերաբերականը խոսքում կարող է գործածվել բացասական երևույթներին առնչվող նախադասության մեջ և դրանով իսկ մասնակցել բացասական վերաբերմունքի արտահայտմանը: Սակայն առանձին բառերի իմաստները նկատի առնելով՝ պետք է ասել, որ բացասական վերաբերմունք կարող են արտահայտել որոշ երկբայական, սահմանափակման, զիջական և ժխտական վերաբերականներ:

Երկբայական վերաբերականներից այդպիսիք են՝ *չլինի, չլինի թե, մի՞թե, հո, խոմ, վայ թե՞* վերաբերականները: Հատկապես առաջին երկուսը

² Տե՛ս նույն տեղում, էջ 550-568: Tes nuyh teghum, ej 550-568.

³ Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Երևան, 1977, էջ 311-348: Tes M. Asatryan, Djamanakakits hayots lezvi dzevabanutyant hartser, G, Er., 1977, ej 311-348.

ցույց են տալիս, որ խոսքն ինչ-որ անցանկալի բանի մասին է, Օր.¹ *Չլինի՞ թե որևէ վիրավորական բան ասացի:*

Այս նախադասությունն ասողի համար ցանկալի չէ, որ ինքը վիրավորական բան ասած լինի, վիրավորական բան ասելը նրա արժեքային համակարգում բացասաբար է գնահատվում, ուստի նա ուզում է խուսափել դրանից:

Մի՞թե-ն, խոսակցական *հո-ն* և բարբառային *խոմ-ը* և *վայ թե-ն* ավելի մեղմ՝ չեզոքին մոտ վերաբերմունք են արտահայտում: Դրանք կասկածի, անհավանականության իմաստ ունեն և կարող են գործածվել տարբեր իմաստներ ունեցող նախադասություններում: Բայց, կարծում ենք, դրանց մեջ մի երանգ կա, որի հետևանքով դրանք ավելի շատ կգործածվեն անցանկալի իրողության վերաբերյալ: Օրինակ՝ շատ ավելի հավանական է *Հո հիվա՞նդ չես* նախադասությունը, քան *Հո առո՞ղջ չես* նախադասությունը, որն ասելու իրողությունը դժվար է պատկերացնել:

Սահմանափակման վերաբերականներից *լոկ-ը* և *միայն-ը* ինքնին բացասական վերաբերմունք չեն արտահայտում, բայց բացասական երանգավորում ունեցող նախադասություններում դրանց գործածությունը հավանական է, քանի որ սահմանափակվածությունը կարող է թերություն համարվել: Օրինակ, *Դու լոկ շարքային ֆիզիկոս ես և ոչ փառանդավոր գիտնական:*

Զիջական վերաբերականներից հատկապես մեկը՝ *ինչ էլ լինի-ն*, չի կապվում դրական հույզերի հետ: Այն նշանակում է, որ խոսողը դժգոհ է իրավիճակից, թեկուզ և չի ենթարկվում դրան, չի հաշտվում դրա հետ: Օրինակ, *Մենք, ինչ էլ լինի, կայցելենք նրան:*

Հնարավոր է պատկերացնել այս նախադասության հետ կապված տարբեր իրադրություններ՝ «նա իրեն լավ չի դրսևորել», «նա վատ մարդ է», «նա մեզ չի սիրում», «նա կարող է մեզ լավ չընդունել», «մեր գնալով նրան չենք օգնի», և այլն, սակայն դրանք բոլորն էլ բացասական գնահատական կստանան, հետևաբար նախադասությամբ կարտահայտվի բացասական վերաբերմունք:

Սրանից կարելի է անել հետևյալ եզրակացությունը. բառը (տվյալ դեպքում՝ վերաբերականը) կարող է բացասական վերաբերմունք չարտահայտել; բայց մասնակցել բացասական վերաբերմունքի արտահայտմանը, ավելին, հակված լինել բացասական վերաբերմունքի արտահայտմանը մասնակցելուն:

Ոչ և *չէ* ժխտական վերաբերականները բացասական վերաբերմունքի հետ են կապված այն չափով, ինչ չափով ժխտումը հոգեբանորեն զուգորդվում է բացասականի հետ: Այս բառերի միջոցով կարող է ժխտվել բացասական երևույթը, որ փաստորեն պիտի դառնա դրականի հաստատում: Սակայն, դրա-

կանի և բացասականի ժխտումները միևնույն ձևով չեն արժևորվում: Դրական երևույթի ժխտումը բացասական երևույթ է համարվում, իսկ բացասական երևույթի ժխտումով ներկայացվում է միջին, չեզոք, զրոյական վիճակ, որ դեռևս չի նույնանում դրականի հետ:

Թեև Մ. Ասատրյանը վերաբերականների դասակարգում չի կատարում, կարելի է փորձել խմբավորել նրա ներկայացրած վերաբերականները դրանց իմաստների բնութագրումների հիման վրա: Մենք փորձել ենք ներկայացնել այդպիսի խմբավորում, որով ստացվում է 15-20 իմաստային խումբ կամ ենթախումբ, այսինքն՝ այս դեպքում խմբերի իմաստներն ավելի նեղ ու որոշակի են: Դրանց մեջ որպես բացասական վերաբերմունքների հետ կապված իմաստներ կարելի է նշել հետևյալները՝ ա) ափսոսանքի, ցավակցման, սրտնեղության, բ) թվացողական, անիրական լինելու, գ) երկբայական, տարակուսական, դ) անհավանականության, ե) դժգոհության, զ) սահմանափակման, է) դժվարիրականանալի կամ համարյա անիրականանալի լինելու, ը) անհանգստության, թ) ժխտումը հաստատող: Ափսոսանքի, ցավակցման վերաբերականները դրական բնույթի են: Եթե դիտարկենք Մ. Ասատրյանի թվարկած վերաբերականները, ապա արդեն բերվածներին կարելի է ավելացնել հետևյալները՝ *դժբախտաբար, ցավոք, ցավոք սրտի* վերաբերականներն արտահայտում են դժգոհությունը, մի բան ցավալի համարելը: *Ախր (ախար)* վերաբերականն ափսոսանք է արտահայտում: *Ինչևէ, ինչևհցե* վերաբերականները ցույց են տալիս, որ խոսողն առանց միտքն ամփոփելու անցնում է հաջորդ հարցին: Սա ևս կարելի է բացասական վերաբերմունք համարել կիսատ թողածի, չամփոփածի նկատմամբ:

2. Ճայնարկություններ

Ճայնարկություններն արտահայտում են հուզական, զգացական կամ կամային վերաբերմունք: Ինչպես և վերաբերականները, դրանք ոչ թե անվանում են վերաբերմունքը, այլ անմիջականորեն արտահայտում են այն: Ճայնարկությունները նույնպես ներկայացնում ենք ըստ Ս. Աբրահամյանի և Մ. Ասատրյանի, որոնք Ճայնարկությունները քննում են նույն սկզբունքով, ինչ որ վերաբերականները: Ս. Աբրահամյանն առանձնացնում է տեսակներ, ապա նշում ամեն մի տեսակի մեջ մտնող Ճայնարկությունների օրինակներ, իսկ Մ. Ասատրյանը հերթականությամբ թվարկում է Ճայնարկությունները՝ յուրաքանչյուրի համար նշելով հնարավոր իմաստները:

Ս. Աբրահամյանը Ճայնարկությունները ենթարկում է աստիճանական դասակարգման: Դրանք նախ բաժանվում են երկու խմբի՝ զգացում արտա-

հայտող և կամային վերաբերմունք արտահայտող վերաբերականների⁴: Զգացում արտահայտողների մեջ նշվում են ուրախություն և հաճելիություն, ցավ, վիշտ, վախ, զղջում, զարմանք և ափսոսանք, դժգոհություն արտահայտող վերաբերականները, քիչ են տհաճություն և զզվանք, անտարբերություն կամ համակերպում, հանդիմանություն և կշտամբանք արտահայտող ծայնարկությունները: Հիշատակված տեսակների մեջ բացասական վերաբերմունք արտահայտող տեսակներն են ցավ, վիշտ, վախ, զղջում, ափսոսանք, դժգոհություն, տհաճություն, զզվանք արտահայտող ծայնարկությունները:

Ծայնարկությունների իմաստային դասակարգումը խիստ դժվարանում է նրանով, որ միևնույն ծայնարկությունը կարող է իրարից բավականին տարբեր վերաբերմունք արտահայտել: Ծայնարկությունների յուրահատկություններից մեկն այն է, որ դրանց ձևավորման մեջ հսկայական դեր ունի հնչերանգը: Կարծում ենք՝ այդ հանգամանքն է նպաստում, որ միևնույն հնչյունը կամ հնչյունների խումբը հնչերանգի որոշ փոփոխություններով փոխի իր իմաստը: Բացի դրանից, ծայնարկության իմաստը որոշակիանում է խոսքաշարի մեջ, նրա իմաստի հիման վրա:

Ուսումնասիրողների ուշադրությունից չի վրիպել նաև ծայնարկությունների բազմիմաստությունը: Ս. Աբրահամյանն այս հարցի կապակցությամբ գրում է. «...վայ-ը կարող է արտահայտել և ուրախության, և ցավի, և վախի, և զզվանքի և այլ զգացումներ»⁵: Մ. Ասատրյանը նշում է *ախ* ծայնարկության տասը իմաստային կիրառություններ, ինչպես նաև մեջբերում է Ստ. Մալխասյանի «Հայերեն բացատրական բառարանից» օրինակներ, որտեղ իմաստային տարբերակներն ավելի շատ են⁶: Ի դեպ, Վ. Վինոգրադովը թվարկում է **a!** ծայնարկության տասը տարբեր իմաստներ⁷:

Չնայած ծայնարկությունների իմաստային բազմազանությանը՝ փորձենք ներկայացնել դրանց այն տեսակները, որոնք բացասական տրամադրություն են արտահայտում, հետևաբար նաև խոսքի առարկայի նկատմամբ բացասական վերաբերմունքի արտահայտիչներ են:

Ցավ, վիշտ, վախ արտահայտող ծայնարկություններ են համարվում *վա՛յ, վու՛յ, վի՛, վըի՛, ըը՛, վա՛շ, վու՛շ, վի՛շ, ա՛, ամա՛ն* ծայնարկությունները:

⁴ Տե՛ս Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 573-576: Tes S. G. Abrahamyan, N. A. Parnasyan, H. A. Ohanyan, nshv. Ashx., ej 573-576.

⁵ Նույն տեղում, էջ 573: Nuyin teghum, ej 573.

⁶ Տե՛ս Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 356-358: Tes M. Asatryan, nshv. Ashx., ej 356-358.

⁷ Տե՛ս Виноградов В.В., указ. соч., стр. 752: Tes V. V. Vinogradov, ukaz. Soch., str. 752.

Զգվանք և տհաճություն արտահայտող ծայնարկությունների մեջ նշվում են *ֆուհ, փուհ, ախ, օ, հի, թյուհ, թուհ, թու, վահ, ուհ* ծայնարկությունները:

Դժգոհության արտահայտություններն են՝ *օ, օհ, էհ, ահ, օֆ, ախ, հը*:

Հանդիմանություն և կշտամբանք արտահայտվում են *այ, այ-այ, այ-այ-այ, վայ-վայ, ախ, ըհ, ուհ, էխ, օֆ, էհեյ* ծայնարկություններով:

Զղջում և ափսոսանք են արտահայտում *ախ, էխ, ավաղ, օհ, օ, վայ, վախ* ծայնարկությունները:

Մ. Ասատրյանը նշում է 55 ծայնարկություն, որոնցից միայն 14-ն են դրական կամ չեզոք հույզ կամ վերաբերմունք արտահայտում, մնացածներից 18-ը միայն բացասական վերաբերմունք են արտահայտում, իսկ մյուսներն այնքան բազմիմաստ են, որ կարող են գործածվել թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք արտահայտելու համար⁸: Միայն այս հաշվարկը ցույց է տալիս, որ բացասական վերաբերմունքի արտահայտումը ծայնարկությունների մեջ գերակշռում է:

Միայն բացասական վերաբերմունք արտահայտող ծայնարկությունների շարքում, Ս. Աբրահամյանի բերած օրինակներից բացի, նշում են *էի, էլ, հ, հա, հեյ, ջան, հեյ-վախ, վուշ-վուշ, վաշ-վիշ, փուի* ծայնարկությունները: Դրական կամ բացասական վերաբերմունք արտահայտող ծայնարկություններից բացի, Մ. Ասատրյանի բերած ցանկում ներառված են 11-ը: Դրանք են բարկություն արտահայտող *օ-ն*, դժգոհություն արտահայտող *բաս-ը* և *օ-ն*, սրտնեղություն արտահայտող *ա-ն*, *է-ն*, *վահ-ը* և *վա-ն*, գանգատ արտահայտող *բաս-ը*, սաստող *է-ն*, հեգնանք արտահայտող *էհե-ն*, քմիծաղ կամ արհամարհանք արտահայտող *հա-ն*, նույն *հա-ն*, *հայ-ը*, *հայ-հայ-ը* և *հայ-հոյ-ը*⁹ որպես սպառնալիքի արտահայտություն, կշտամբանքի արտահայտությունները՝ *վահ, վա, հայ, հայ-հայ, հայ-հոյ*: Այս թվարկման մեջ եղած կրկնությունները պայմանավորված են ծայնարկությունների բազմիմաստությամբ:

Կամային ծայնարկությունների մեջ վերաբերմունքի դրսևորումը փոքր է կամ բացակայում է: Թերևս բացառություն են կազմում կենդանիներին ուղղված այն բացականչությունները, որոնց նպատակը նրանց քշելը, հեռացնելն է՝ *քը՛շ, քշա՛, փի՛շտ*: Պարզ է, որ այս կարգի ծայնարկությունը կօգտագործվի այն իրադրության մեջ, որտեղ տվյալ կենդանու ներկայությունն անցանկալի է: Իսկ անցանկալի համարելը, իհարկե, բացասական վերաբերմունքի նշան է:

Գոյություն ունի ծայնարկությունների ևս մեկ տեսակ, որը վերաբերմունք

⁸ Տե՛ս **Ասատրյան Մ.**, նշվ.աշխ., էջ 360-370: Տե՛ս M. Asatryan, nshv. Ashx., ej 360-370.

արտահայտելու առումով միանգամայն յուրահատուկ դիրք է գրավում այս խոսքի մասին պատկանող բոլոր բառերի շարքում: Այդ տեսակի մեջ մտնում են բնածայնությունները: Այս ծայնարկությունները բնության մեջ եղած ծայնների ընդօրինակումները, նմանակումներն են և զուրկ են վերաբերմունքային իմաստից: Ինչպես և մյուս ծայնարկությունները, դրանք հասկացություն չեն նշանակում, բայց վերաբերմունքի հետ կապվում են ճիշտ այնպես, ինչպես որ հասկացություն նշանակող բառերը՝ նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը: Դրանք օբյեկտիվորեն ներկայացնում են ծայնը, և վերաբերմունքը դրանց մեջ հանդես է գալիս որպես հարանշանակություն: Տվյալ ծայնը կամ այն արծակող առարկան կարող են կապվել որևէ վերաբերմունքի հետ՝ դրական կամ բացասական: Դա կարող է լինել ծայնի գեղագիտական գնահատում կամ առարկայի գնահատում: Օրինակ՝ *խըռռ, դըռռ, դըմկի, ճըզզ, ճըռռ* և նման այլ ծայնարկություններ բացասաբար կգնահատվեն՝ որպես անբարեհունչ ծայներ, իսկ *ֆըշշ*-ը բացասական երանգ ունեցող պիտի համարվի՝ կապվելով օձի հետ: Այս կարգի ծայնարկությունները մասնակցում են գոյականների և բայերի կազմությանը:

Այսպիսով, կարելի է տեսնել, որ և՛ վերաբերականներով, և՛ ծայնարկություններով արտահայտած վերաբերմունքը կարող է բազմազան լինել: Այս երկու խոսքի մասերը նաև իմաստային առանձնահատկություններ ունեն: Վերաբերականներով արտահայտվում է մտածական վերաբերմունք: Դրանք կազմված են իմաստակիր ձևայիններից, ծագումով կապվում են այլ խոսքի մասերի հետ և որոշակի իմաստներ ունեն: Զայնարկությունները հուզական վերաբերմունքի անմիջական արտահայտություններ են: Դրանցում չկան այլ բառերում հանդիպող ձևայիններ, դրանց իմաստը կախված է իրենց կազմում եղած հնչյուններից և հնչերանգից: Դրա հետևանքով ծայնարկությունները խիստ բազմիմաստ են, կարող են անգամ հակադիր զգացումներ և վերաբերմունք արտահայտել: Զայնարկությունների մյուս յուրահատկությունն այն է, որ դրանց մեջ կան մի խումբ բառեր՝ բնածայնությունները, որոնցում, ի տարբերություն մյուս ծայնարկությունների և վերաբերականների, հուզական իմաստը հանդես է գալիս որպես հարանշանակություն և ոչ թե բուն իմաստ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերաբերմունք արտահայտելու առումով իրարից հստակորեն տարբերվում են նյութական իմաստ ունեցող, հարաբերության (քերականական) իմաստ ունեցող և վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերը: Վերա-

բերմունքային իմաստ ունեցող խոսքի մասերում (վերաբերական, ծայնարկություն) վերաբերմունքի իմաստը բառի ուղղակի իմաստն է, ընդ որում դա վերաբերմունք հասկացության անվանումը չէ, այլ վերաբերմունքի անմիջական դրսևորումը:

Բանալի բաներ - լեզվաբանություն, գնահատողական վերաբերմունք, դրական վերաբերմունք, բացասական վերաբերմունք, վերաբերական, ծայնարկություն:

ВЫРАЖЕНИЕ ОТРИЦАТЕЛЬНОЙ ОЦЕНКИ В ЧАСТЯХ РЕЧИ С РЕЛЯЦИОННЫМИ ЗНАЧЕНИЯМИ

ЭДИТА АСАТРЯН

По особенностям выражения оценки четко разграничиваются части речи с материальными, грамматическими и реляционными значениями. В частях речи с реляционными значениями (модальные слова, междометия), выражение оценки совпадает с лексическим значением слова, причем это не обозначение оценочного отношения, а его непосредственное выражение.

Ключевые слова - Лингвистика, оценочное отношение, позитивное отношение, отрицательное отношение, модальные слова, междометие.

NEGATIVE ASSESSMENTS IN SPEECH PARTS EXPRESSING ATTITUDE

EDITA ASATRYAN

In terms of expressing attitude or stance, there is a clear-cut distinction between those parts of speech, which convey denotational, grammatical and connotational (attitudinal) meanings. The first two constitute the central factor in linguistic communication while connotational (attitudinal) meanings provide additional effects to the central meaning. In speech with words expressing attitude (modal words, interjections, etc.) the notion of the attitude is expressed through the denotational (literal) meaning of the given word. It should be mentioned that the aforementioned parts of speech do not specify the notion of an attitude, instead they represent an attitude.

Key words - Linguistics, evaluative attitude, positive attitude, negative attitude, interjection, modal words.